Office in Yerevan

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՐԱՖԻԿԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2006 թ. հունիսի 8, Երևան

Կազմակերպված ԵԱՀԿ Երևանի գրասենյակի կողմից՝

Թրաֆիկինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնախմբի հետ համատեղ և ԱՄՆ Պետդեպարտամենտի աջակցությամբ

ԵԱՀԿ Երևանի գրասենյակ

Ժողովրդավարության զարգացման ծրագիր

Օգոստոս 2006 թ.

ԵԱՀԿ Երևանի գրասենյակ
Տերյան 89, 1009, Երևան, Հայաստան
Հեռ. +374 10 541062/3/4/5
Ֆաքս +374 10 541061

Բլանկա Հանչիլովա
blanka.hancilova@osce.org, blanka@hancil.net
Ժողովրդավարության զարգացման ծրագրի պատասխանատու

Օվսաննա Բաբայան
ovsanna.babayan@osce.org
Ազգային ծրագրի պատասխանատու

Ծովինար Արևյան
tsovinar.arevyan@osce.org
Ժողովրդավարության զարգացման ծրագրի ավագ օգնական

Ծովինար Հարությունյան
tsovinar.harutyunyan@osce.org
Մարդու իրավունքների պաշտպանության ծրագրի օգնական

Office in Yerevan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ելույթների ամփոփագրեր 6
ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ղեկավար, դեսպան Վլադիմիր Պրյախինի բացման խոսքը 6
Թրաֆիկինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնախմբի նախագահ պրն. Վալերի Մկրտումյանի ելույթը 6
«Հույս և օգնություն» ՀԿ նախագահ Ենոք Շատվորյանի ելույթը 7
ԵԱՀԿ Թրաֆիկինգի դեմ պայքարին աջակցության ստորաբաժանման ներկայացուցիչ տիկին Լիլիանա Սորենտինոյի ելույթը 9
ԵՄ Թրաֆիկինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի անդամ, Չեխիայի Հանրապետության ներքին գործերի նախարարության ներկայացուցիչ տիկին Հանա Շնայդրովայի ելույթը 11
Հարց ու պատասխան 12
Եզրափակիչ մաս 14

Մարդկանց թրաֆիկինգի հիմնախնդրին արձագանքելու հարցում Հայաստանի իշխանություններին ցուցաբերվող աջակցությանն ուղղված միջոցառումների շրջանակներում 2006 թ. հունիսի 8-ին ԵԱՀԿ Երևանի գրասենյակը համար կազմակերպել էր Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի (ԳԱԾ) իրականացման և նոր ԳԱԾ-ի մշակման հարցերին նվիրված կլոր սեղան:

Միջոցառումը կազմակերպվել էր Թրաֆիկինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնախմբի հետ սերտ համագործակցությամբ և ԱՄՆ Պետդեպարտամենտի աջակցությամբ: Կլոր սեղանին մասնակցում էին միջգերատեսչական հանձնախմբի անդամները, թրաֆիկինգից տուժածների հետ աշխատող հիմնական հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Այս նախաձեռնության նպատակն էր օժանդակել, որպեսզի ՀՀ կառավարությունը կատարի այս բնագավառում ԵԱՀԿ իր հանձնառությունները և միջազգային պարտավորությունները, որոշի ռազմավարությունը, որը սահմանում է երկրում թրաֆիկինգի դեմ պայքարի քաղաքականության առաջնությունները, մշակի ԳԱԾ, որը (1) հիմնված է երկրում թրաֆիկինգի վիճակի ընդհանուր գնահատականի վրա, (2) հստակ սահմանում է ծրագիրն իրականացնող տարբեր գերատեսչությունների խնդիրներն ու գործառույթները, (3) նախատեսում է համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ և նրա ներդրումը ծրագրի իրականացմանը, (4) բաշխում է ֆինանսական միջոցները՝ հաշվի առնելով դրանց և մարդկային ռեսուրսների հետ կապված սահմանափակումները, (5) նախատեսում է ծրագրի ժամանակացույցը, և (6) սահմանում է չափորոշիչներ՝ դրանով իսկ բարձրացնելով ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը:

Կլոր սեղանի նպատակն էր.

1. ներկայացնել ԵԱՀԿ անդամ պետությունների փորձը,

2. քննարկել Հայաստանի 2004 - 2006 թթ. ԳԱԾ-ի իրականացման ընթացքում ծագած խնդիրները և քաղած դասերը,

3. քննարկել Հայաստանի 2004 - 2006 թթ. ԳԱԾ-ի իրականացմանը հաջորդող միջոցառումները և թրաֆիկինգի դեմ պայքարի քաղաքականության ու նոր ԳԱԾ-ի մշակման գործընթացը,

4. բացահայտել կարիքները և աջակցության այն տեսակները, որոնք ԵԱՀԿ-ն և հնարավորության դեպքում նաև մյուս միջազգային կազմակերպությունները կարող են ցույց տալ Ազգային ռազմավարության և Գործողությունների ազգային ծրագրի մշակման ընթացքում:

ԵԱՀԿ Երևանի գրասենյակը կլոր սեղանին մասնակցելու համար հրավիրել էր երկու փորձագետ՝ ԵՄ Թրաֆիկինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի անդամ, Չեխիայի հանրապետության ներքին գործերի նախարարության ներկայացուցիչ տիկին Հանա Շնայդրովային և ԵԱՀԿ Թրաֆիկինգի դեմ պայքարին աջակցության ստորաբաժանման (Վիեննա, Ավստրիա) ներկայացուցիչ տիկին Լիլիանա Սորենտինոյին:

Ելույթների ամփոփագրեր

ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ղեկավար, դեսպան Վլադիմիր Պրյախինի բացման խոսքը

Դեսպան Պրյախինը նշեց հանդիպման կարևորությունը և այժմեականությունը, քանի որ Հայաստանի՝ Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների ազգային առաջին ծրագիրը (2004 - 2006 թթ.) մոտենում է ավարտին և ժամանակն է մտածել նոր ծրագրի մասին՝ հաշվի առնելով պետության հաջողությունները մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի ոլորտի միջազգային պարտավորությունների ու հանձնառությունների կատարման հարցում: Այս առումով խիստ կարևոր է մշակել Գործողությունների ազգային նոր ծրագիր և նախատեսել մեխանիզմներ դրա արդյունավետ իրականացման համար: Ավարտելով իր խոսքը՝ դեսպան Պրյախինը մասնակիցներին ցանկացավ արդյունավետ ու արգասավոր քննարկում, որի արդյունքում կձևավորվեն գաղափարներ Գործողությունների ազգային նոր ծրագրի համար:

Թրաֆիկինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնախմբի նախագահ պրն. Վալերի Մկրտումյանի ելույթը

Պարոն Մկրտումյանը մասնակիցներին համառոտ ներկայացրեց Թրաֆիկինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնախմբի կատարած աշխատանքը՝ սկսած 2003 թ.: Նա շնորհակալություն հայտնեց միջազգային կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին թրաֆիկինգի դեմ պայքարի ոլորտում ՀՀ կառավարությանը ցուցաբերած օժանդակության համար և արտահայտեց իր պատրաստակամությունը շարունակել այդ համագործակցությունը:

Իր ելույթում պրն. Մկրտումյանը ընդգծեց Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների վավերացման և 2003 թ. օգոստոսին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի (Մարդկանց առևտուրը) կարևորությունը: Այս կապակցությամբ Թրաֆիկինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնախումբն արդարադատության նախարարությանն առաջարկել էր նախաձեռնել 132-րդ հոդվածում1 փոփոխություններ կատարելու օրենսդրական գործընթաց՝ դրա մեկնաբանությունը հստակեցնելու և այս հանցագործությունը կավատության ու դրա հետ կապված արարքների համար քրեական պատասխանատվություն սահմանող հոդվածներից տարբերակելու նպատակով:

2007 - 2009 թթ. համար նախատեսված Գործողությունների նոր ծրագիրը պետք է հստակ պատկերացում տա այն մասին, թե ովքեր են գործող անձինք և որոնք են նրանց դերն ու պարտականությունները: Այս ամենը պետք է հիմնված լինի գործող ծրագրի իրականացման փորձի վերլուծության վրա:

Այս առումով կարևոր նշանակություն ունի նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված Աղքատության կրճատման ռազմավարությունը, քանի որ այն անդրադառնում է թրաֆիկինգի կանխարգելմանն ուղղված հիմնական միջոցառումներին: Միջգերատեսչական հանձնախմբի կարծիքով, տարածաշրջանային համագործակցությունը, որին մշտապես առաջնություն են տվել Հայաստանում թրաֆիկինգի դեմ պայքարի հարցերով զբաղվողկառույցները, սպասվածի

---

[1] 2006 թ. հուլիսի 16-ին ուժի մեջ մտան 132-րդ հոդվածի փոփոխությունները և թրաֆիկինգի վերաբերյալ նոր 132[1] հոդվածը /ծանոթ. ԵԱՀԿ Երևանի գրասենյակի/:

համեմատ այդքան էլ արդյունավետ չէր, որի պատճառն Ադրբեջանի հետ ունեցած լարված հարաբերություններն են: Հուսադրող համագործակցություն է հաստատվել Միացյալ Արաբական Էմիրությունների հետ, որը մարդկանց թրաֆիկինգի հիմնական ընդունող երկիր է, ինչպես նաև Ուզբեկստանի ու այլ պետությունների հետ: Թրաֆիկինգի ենթարկված ՀՀ քաղաքացիների համար մեկ այլ հիմնական ընդունող երկրի՝ Թուրքիայի պարագայում որոշակի օգնություն են տրամադրում տեղի հայ համայնքը և Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչությունները: Հայաստանը մի շարք պետությունների հետ ստորագրել է հատուկ համաձայնագրեր, որոնք կոչված են նպաստել արտասահմանում ապօրինի կերպով գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի կազմակերպմանը: Հայաստանից թրաֆիկինգի կանխարգելման համար կարևոր նշանակություն ունեն հետագա միջոցառումներն աշխատուժի միգրացիայի կառավարման բնագավառում: Դրա հետ մեկտեղ, առանձին պետական մարմինների կողմից բարձրացվել է զբաղվածության գործակալությունների լիցենզավորման խնդիրը, որի կապակցությամբ պետք է որոշակի միջոցներ ձեռնարկվեն: ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական հիմնարկների պաշտոնատար անձինք պաշտպանում են իրենց քաղաքացիների իրավունքներն արտասահմանյան երկրներում, և թրաֆիկինգի հետ կապված կոնկրետ դեպքերում նրանց օգնություն ցույց տալու նպատակով կարող են մշակվել ձեռնարկներ ու ուղեցույցներ: Դրանից բացի, բարելավվել է համագործակցությունը իրավապահ մարմինների և տեղական հասարակական կազմակերպությունների միջև. այն պետք է ամրապնդվի նաև ապագայում:

Վերջին շրջանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ֆինանսական աջակցությամբ աշխատանքներ են տարվում Թրաֆիկինգի մասին օրենքի նախագծի մշակման ուղղությամբ, որի անհրաժեշտության հարցը բազմաթիվ քննարկումների տեղիք է տվել: Այս հարցը պետք է քննարկվի նաև ապագայում, քանի որ շատ պետական և ոչ պետական հաստատություններ դեռևս համոզված չեն, որ այդ նոր օրենքի ընդունումը ճիշտ քայլ է:

Գործողությունների ազգային ծրագրի նոր տարբերակում անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հիմնական բնագավառներին.

- *Կանխարգելում*, այդ թվում նաև հասարակության մեջ կանանց դերի բարձրացման միջոցով,
- *Տուժածների պաշտպանություն* իրավախորհրդատվության, հոգեբանական ու բժշկական օգնության և վերաինտեգրմանն աջակցելու միջոցով: Պետք է քննարկվի նաև փոխհատուցման հարցը:
- *Հանցագործներին պատժելը* լավ կանխարգելիչ միջոց է: Այս կապակցությամբ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց համար կազմակերպվել է հատուկ ուսուցում: Պետք է կատարելագործվեն նաև նախաքննության ու քրեական հետապնդման մեխանիզմները: Անհրաժեշտ է հետագայում քննարկել նաև սահմանապահների դերը թրաֆիկինգի դեմ մղվող պայքարում:
- *Տարածաշրջանային համագործակցություն*, որն ուղղված է հանձնման, վերադարձի և նման այլ հարցերի վերաբերյալ երկկողմ համաձայնագրերի կնքմանը: Կարևոր նշանակություն ունի նաև տեղեկատվության կանոնավոր փոխանակումը:
- Ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել *ԳԱԾ-ի արդյունավետ իրականացման մեխանիզմներին*:

«Հույս և օգնություն» ՀԿ նախագահ Ենոք Շատվորյանի ելույթը

Պարոն Ենոք Շատվորյանի ելույթը նվիրված էր հասարակական կազմակերպությունների դերին Գործողությունների ազգային ծրագրի իրականացման հարցում և դրա հեռանկարներին:

Գործողությունների ազգային առաջին ծրագրի իրականացման երկու տարիների ընթացքում տեղական հասարակական կազմակերպություններն արձանագրել են մի շարք նվաճումներ, որոնցից առավել կարևոր են ստորև թվարկվածները.

- Ձեռք է բերվել փորձառություն տուժածներին աջակցություն տրամադրելու բնագավառում,
- Բարելավվել է համագործակցությունը հասարակական կազմակերպությունների և իրավապահ մարմինների միջև,
- Զգալի չափով բարձրացել է հասարակության իրազեկության մակարդակը թրաֆիկինգի հետ կապված խնդիրների վերաբերյալ:

«Հույս և օգնություն» հասարակական կազմակերպության թրաֆիկինգի դեմ պայքարի «թեժ գիծ» ծառայությունը սկսել է գործել 2003 թ., որն, ի դեպ, առաջինն էր հանրապետությունում: Այն մշակել է նախնական նույնականացման և աջակցության մեխանիզմ: 2003 թ. հոկտեմբեր և 2006 թ. հունիս ամիսների միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպությունն օգնություն է ցույց տվել թվով 48 թրաֆիկինգի զոհերի (այդ թվում՝ 12 օտարերկրացու)՝ թրաֆիկինգի հետ կապված 35 դեպքերի շրջանակներում: Այդ զոհերի մի մասը հասարակական կազմակերպություն է ուղղորդվել իրավապահ մարմինների (17 զոհ, 8 դեպք) ու Միգրացիայի միջազգային կազմակերպության (5 զոհ, 2 դեպք) կողմից, իսկ մնացած 26 հոգին հայտնաբերվել են կազմակերպության սոցիալական աշխատողների և «թեժ գիծ» ծառայության օպերատորների աշխատանքի շնորհիվ: Բոլոր նույնականացված զոհերին ցույց է տրվել բժշկական, հոգեբանական և իրավաբանական օգնություն: 26 զոհի տրամադրվել է ժամանակավոր ապաստան, մնացածը դրա կարիքը չեն ունեցել: Կազմակերպության կողմից զոհերի հետ տարվող աշխատանքի շնորհիվ նրանցից 12-ը ցանկություն են հայտնել համագործակցել իրավապահ մարմինների հետ: 2004 թ. հունվարից ի վեր «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպության «թեժ գիծ» ծառայությունը ստացել է 1 358 հեռախոսազանգ: Այս առանձնահատուկ ծառայության միջոցով կազմակերպությունը կապ է հաստատել թրաֆիկինգի 11 զոհի հետ, ինչպես նաև հարյուրավոր մարդկանց տեղեկատվություն է տրամադրել արտասահմանում աշխատանքի ընդունման, անօրինական միգրացիայի վտանգերի, վերադարձի հնարավորությունների և այլնի վերաբերյալ:

Տպագրվել և ավիատոմսեր վաճառող գործակալությունների միջոցով Արաբական Միացյալ Էմիրություններ և Թուրքիա մեկնող ուղևորներին են բաժանվել բազմաթիվ բուկլետներ: Տեղական իշխանությունների հետ համագործակցությամբ և նրանց աջակցությամբ Վանաձորում, Գյումրիում և Գորիսում բացվել են Հակաթրաֆիկինգային ռեսուրս կենտրոններ: ՄԱԿ-ի թրաֆիկինգի դեմ պայքարի ծրագրի շրջանակներում ստեղծվել է Հարավային Կովկասի հասարակական կազմակերպությունների ցանց, ինչպես նաև գործունեություն է ծավալվել զոհերի անվտանգ վերադարձի կազմակերպման ուղղությամբ՝ համագործակցելով Թուրքիայի ու Վրաստանի հետ:

Տեղական հասարակական կազմակերպությունների անունից «Հույս և օգնություն» ՀԿ նախագահը շնորհակալության հայտնեց ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության աշխատակիցներին՝ զոհերին անհրաժեշտ վերադարձի վկայականներով ապահովելու համար: Այսուհանդերձ, պետական մարմինների կողմից զոհերի ուղղորդումը դեպի հասարակական կազմակերպություններ դեռևս պատշաճ մակարդակի վրա չէ: Սա հիմնավորվում է նաև այն փաստով, որ պետական մարմիններից ստացված պաշտոնական տվյալների համաձայն՝ 2005 թ. եղել է թրաֆիկինգից տուժած 30 անձ, սակայն նրանցից միայն 14-ն են աջակցություն ստանալու նպատակով ուղղորդվել ծառայություն տրամադրող կառույցներ (հասարակական կազմակերպություններ):

ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործի քննության ընթացքում ոչ մի տուժող երբևէ չի պահանջել նյութական կամ բարոյական փոխհատուցում: Չկան զոհերի նախնական նույնականացման ընդունված չափանիշներ, չկա նաև գործող Ուղղորդման ազգային մեխանիզմ (ՈՒԱՄ): Բացի այդ, չի ընդունվել Թրաֆիկինգի դեմ պայքարի մասին օրենք: Գործող ՈՒԱՄ-ի, ինչպես նաև Թրաֆիկինգի դեմ պայքարի մասին օրենքի բացակայությունը բարդացնում է համագործակցությունը իշխանությունների ու հասարակական կազմակերպությունների միջև, երբեմն այն դարձնելով անարդյունավետ:

Արդյունքների ամփոփում. թրաֆիկինգի հետ կապված քիչ թվով գործեր են բացահայտվել հետաքննության միջոցով, իսկ զոհերի մեծամասնությունը չի դիմում իրավապահ մարմինների օգնությանը, քանի որ նրանք չեն վստահում ոստիականությանը և չեն ակնկալում որևէ օգուտ նախաքննության և քրեական հետապնդման ընթացքում նրանց հետ համագործակցությունից, քանի որ, մասնավորապես, չեն ակնկալում կրած վնասների փոխհատուցում: Մտահոգող է նաև քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության մեխանիզմների բացակայությունը, ինչի հետևանքով տուժածները վախենում են թրաֆիկինգ իրականացնողների հաշվեհարդարից: Բացի այդ, զոհերը բավականաչափ տեղեկացված չեն իրենց իրավունքների մասին և դրանցից չեն օգտվում:

Թրաֆիկինգի զոհերի սոցիալական վերաինտեգրումը չի կարող արդյունավետ համարվել, քանի որ երկրում տիրող գործազրկության ներկայիս վիճակը հնարավորություն չի տալիս կարճատև ուսուցում անցած և աշխատանքի սահմանափակ փորձ ունեցող կամ ընդհանրապես փորձ չունեցող կանանց աշխատանք գտնել: Մեկ այլ խնդիր է թրաֆիկինգի զոհերին իրավաբանական խորհրդատվություն և պաշտպանություն տրամադրող փաստաբանների համապատասխան փորձի բացակայությունը:

ԵԱՀԿ Թրաֆիկինգի դեմ պայքարին աջակցության ստորաբաժանման ներկայացուցիչ տիկին Լիլիանա Սորենտինոյի ելույթը

Տիկին Սորենտինոյի ելույթը նվիրված էր Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրերին ԵԱՀԿ անդամ պետություններում:

ԵԱՀԿ մասնակից պետությունների 64%-ը մշակել է ԳԱԾ-եր կամ ընդունել է մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի բնագավառում պետական քաղաքականության նպատակները սահմանող հայեցակարգային որևէ փաստաթուղթ: ԳԱԾ-երը սովորաբար պարունակում են մարդկանց թրաֆիկինգի կանխարգելմանը, մարդկանց թրաֆիկինգի կազմակերպման մեջ մեղադրվող անձանց պատժելուն, թրաֆիկինգից տուժածներին պաշտպանելուն և համակարգված ու բազմակողմանի հակազդեցության ապահովմանն ուղղված միջոցներ՝ հստակ սահմանելով տարբեր պետական մարմինների խնդիրներն ու գործառույթները: Ավելին, մի շարք անդամ պետություններում նշանակվել են նաև ազգային համակարգողներ:

Գործողությունների ազգային ծրագրի ընդունման հիմնական պատճառներն են.

1. Այն որոշակիորեն նպաստում է պետության կողմից մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարում գործադրվող ջանքերին:

2. Դրա միջոցով իրական բովանդակություն է հաղորդվում բոլոր հանձնառություններին և հիմնավոր մտադրություններին:

3. Այն հիմք է ծառայում տվյալ հիմնախնդրի վերահսկման համար, այսինք՝ թե ինչ է արվել և որքանով է դա արդյունավետ:

4. Այն հնարավորություն է տալիս պետական կառույցներին ներգրավել քաղաքացիական հասարակության հետ տվյալ հիմնախնդրի շուրջ երկխոսության մեջ, ինչպես նաև մասնակից դարձնել համապատասխան հակազդեցության միջոցների մշակմանը:

5. ԳԱԾ-ը հայեցակարգային հիմք է ապահովում համակարգված, բազմակողմանի ու ամբողջական մոտեցման համար:

6. Այն նաև արդյունավետ միջոց է տվյալ հիմնախնդրի շուրջ ազգային քաղաքականության իրականացման բնագավառում պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլ կառույցների գործառույթները սահմանելու համար:

7. Այն օգնում է սահմանել գերակայությունները և բաշխել միջոցները, այդ թվում նրանք, որոնք ստացվել են դոնորներից:

Գործողությունների ազգային ծրագրի մշակման հարցում ղեկավար նշանակություն ունեն հետևյալ սկզբունքները.

1. Գործողությունների ծրագիրը հիմնված է մարդկանց թրաֆիկինգի Պալերմոյի սահմանման վրա:

2. Տուժածների իրավունքների պաշտպանությունն առաջնային նշանակություն ունի թրաֆիկինգի դեմ պայքարի բոլոր միջոցառումների շարքում: Այս մոտեցումը նույնպես ապացուցել է իր արդյունավետությունն իրավապահ մարմինների գործունեության տեսակետից, քանզի երբ տուժածների իրավունքները պաշտպանված են և կա համապատասխան աջակցություն, նրանք հաճախ ավելի հակված են համագործակցել իրավապահ մարմինների հետ և ցուցմունք տալ:

3. Ծրագրի մշակման, իրականացման և վերահսկման գործընթացին պետք է մասնակից դառնան տարբեր կառույցներ:

4. Հաստատվել է համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ: Մասնավորապես, Գործողությունների ծրագիրը պետք է պարունակի դրույթներ պետական կառույցների, առաջին հերթին իրավապահ մարմինների, և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության ինստիտուցիոնալիզացիայի վերաբերյալ:

5. Վճռական նշանակություն ունի պետության դերակատարությունը: Իշխանությունները (որոնք հիմնական պատասխանատուն են այս հանցագործության դեմ պայքարում) իրենք են ընտրում երկարաժամկետ նպատակները և դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցները:

6. Ձեռնարկվող միջոցները պետք է լինեն իրատեսական, իրագործելի և կայուն:

Ընդհանուր առմամբ, ծրագիրը պետք է նախատեսի թրաֆիկինգի տարբեր դրսևորումներին արագ հակազդելու ճկուն կառուցակարգ: Այն պետք է երաշխավորի շահագործման ցանկացած ձևից տուժածների աջակցությունը, նրանց իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ ինքնուրույն որոշում կայացնելու և իրավական պաշտպանության իրավունքը, այն ժամանակ, երբ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում:

ԳԱԾ-ի հիմնական տարրերն են.

1. Կանխարգելում,

2. Նույնականացում, աջակցություն և պաշտպանություն,

3. Քրեական հետապնդում,

4. Միջազգային, տարածաշրջանային համագործակցություն:

Դիմելով ԵԱՀԿ անդամ պետությունների փորձին՝ տիկին Սորենտինոն ներկայացրեց գործողությունների ծրագրերում նախատեսված կանխարգելման, պաշտպանության և պատասխանատվության միջոցների օրինակներ:

Վերջում տիկին Սորենտինոն խորհուրդ տվեց Հայաստանի Գործողությունների նոր ծրագիրը մշակելիս հաշվի անել երկրում տվյալ հիմնախնդրի ծավալների, նախկինում ձեռնարկված ինստիտուցիոնալ և օրենսդրական միջոցների, ինչպես նաև օտարերկրացի ու տեղացի տուժածների, չափահասների ու երեխաների թրաֆիկինգի առանձին դեպքերին արձագանքելու առկա փորձի գնահատման արդյունքները: Իրականում այս գործընթացը պետք է ղեկավարի կառավարությունը՝ փաստաթուղթը մշակողների խումբ ստեղծելու և տարբեր տեղական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կառույցների հետ խորհրդակցություններ վարելու միջոցով:

ԵՄ Թրաֆիկինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի անդամ, Չեխիայի Հանրապետության ներքին գործերի նախարարության ներկայացուցիչ տիկին Հանա Շնայդրովայի ելույթը

Տիկին Շնայդրովայի ելույթը նվիրված էր մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարին Չեխիայի Հանրապետությունում:

Մինչ այժմ Չեխիայի Հանրապետությունում մշակվել է երկու ԳԱԾ: Չեխիայում թրաֆիկինգի դեմ պայքարը ղեկավարում է Ներքին գործերի նախարարությունը, իսկ Ներքին գործերի փոխնախարարն այս հարցով Ազգային համակարգողն է: ԳԱԾ-երը թարմացվում են երկու տարին մեկ: Բարդություններից մեկը, որի հետ բախվում են թրաֆիկինգի դեմ պայքարի մասնակիցները, կայանում է նրանում, որ չկա հստակ տարանջատում աշխատանքի շահագործման և թրաֆիկինգի միջև:

Չեխիայի Հանրապետությունում թրաֆիկինգի դեմ պայքարի բնագավառում արդյունավետ համագործակցում են հետևյալ կառույցները.

- Ազգային համակարգող՝ Ներքին գործերի առաջին փոխնախարար,
- Ազգային համակարգողի քարտուղարություն՝ հանցագործությունների կանխարգելման վարչություն,
- Չեխիայի Հանրապետության ոստիկանություն (կազմակերպված հանցավորության ստորաբաժանում, քրեական ոստիկանություն և օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանություն),
- «Երջանկություն առանց ռիսկի»՝ փողոցներում աշխատանքներ իրականացնող ՀԿ,
- «La Strada»՝ ծառայություն մատուցող ՀԿ,
- «Catholic Caritas»՝ ծառայություն մատուցող ՀԿ,
- Միգրացիայի միջազգային կազմակերպություն՝ կամավոր վերադարձ:

Հիմնախնդիրներն են գերակայությունների տարբերությունները, այս գործընթացի մասնակիցների միջև մրցակցությունը:

Տուժածներին մատուցվող ծառայություններ.

- Հանցավոր միջավայրից անմիջապես հեռացնելը,
- Կացության օրինականացումը,
- Վերականգնման շրջան տրամադրելը,
- Կամավոր վերադարձի կազմակերպումը,
- Ապաստանի տրամադրումը,
- Հոգեբանական և սոցիալական խորհրդատվությունը,
- Սոցիալական աշխատանքը,
- Իրավախորհրդատվություն+թարգմանություն ապահովելը,
- Հոգեթերապիայի ծառայությունները,
- Ֆինանսական օժանդակությունը,
- Բժշկական խնամքը,
- Վերաորակավորումը,
- Երկարաժամկետ սոցիալական վերաինտեգրումը,
- Վկաների պաշտպանության ծրագրին մասնակցելը՝ համաձայն թիվ 137 ակտի (2001 թ. օրենքների ժողովածու):

Տուժածների մասնակցությունը ծրագրին դադարեցվում է, եթե նրանք.

- շարունակում են կապ պաշտպանել հանցավոր միջավայրի հետ,
- կամավոր կերպով վերադառնում են հանցավոր միջավայր,
- հանցագործություն են կատարում,

- խախտում են ապաստանում սահմանված կանոնները,
- հրաժարվում են այլևս համագործակցել իրավապահ մարմինների հետ,
- կեղծ տեղեկություններ են տրամադրում:

2003 թ. ծրագիրը ֆինանսավորվել է Թմրամիջոցների նկատմամբ վերահսկողության և հանցավորության կանխման ՄԱԿ-ի գրասենյակի կողմից: 2004 թ. սկսած անհրաժեշտ միջոցները տրամադրվել են պետական բյուջեից՝ այս բնագավառում ծավալված գործունեության կայունությունն ապահովելու նպատակով:

Հարց ու պատասխան

Հ. Ո՞վ է զբաղվում նույնականացման հարցերով Չեխիայի Հանրապետությունում:

Պ. Մինչ օրս թրաֆիկինգի զոհերի նույնականացումն իրականացրել են հասարակական կազմակերպությունները՝ համագործակցելով ոստիկանության հատուկ ստորաբաժանման հետ: Ենթադրյալ զոհը տեղեկացվում է իր իրավունքների ու հնարավոր տարբերակների մասին և լրացնում է պաշտպանության ծրագրին կամավոր դիմելու համար հատուկ ձև:

Հ. *Կա՞ն, արդյոք, Չեխիայի Հանրապետությունում թրաֆիկինգ իրականացնողների գույքը բռնագրավելու մեխանիզմներ:*

Պ. Սա կարևոր հարց է: Չեխիայի Հանրապետությունն այս ոլորտում բավականաչափ փորձ չունի, սակայն Ներքին գործերի նախարարությունը փորձում է մշակել մի մեխանիզմ, որի համաձայն բռնագրավված գույքն օգտագործվելու է տուժածներին աջակցության պետական հիմնադրամի կողմից, այլ ոչ թե փոխանցվելու է պետական բյուջե:

Հ. *Այն դեպքում, եթե պետությունը չունի միջոցներ թրաֆիկինգից տուժածներին օգնություն տրամադրելու համար, հնարավո՞ր է, արդյոք, ստեղծել հիմնադրամ, որը բռնագրավված գույքը կօգտագործի տուժածներին աջակցելու համար:*

Պ. Մենք պետք է թրաֆիկինգի ենթարկված անձանց սոցիալական պաշտպանության ծրագրերը ֆինանսավորելու նպատակով պետական բյուջեից կատարված հատկացումները տարբերակենք հանցագործությունից տուժածների՝ պատճառված վնասի հատուցում պահանջելու իրավունքից: Իտալիայում, օրինակ, թրաֆիկինգի ենթարկված անձանց հասարակական կապերի վերականգնման ծրագրերը ֆինանսավորվում են Հավասար հնարավորությունների գերատեսչության (Department for Equal Opportunities) կողմից և համաֆինանսավորվում են իշխանության տեղական մարմինների կողմից: Կան մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք պետության կողմից լիազորված են աջակցելու և օժանդակելու մարդկանց թրաֆիկինգից տուժածներին, և որոնք առաջարկություններ են ներկայացնում այդ ծրագրերի համար պետության կողմից ֆինանսական միջոցներ ստանալու նպատակով: Բացի այդ, զոհը կարող է նաև քաղաքացիական հայց հարուցել հանցագործությունը կատարած անձի դեմ՝ նյութական և ոչ նյութական վնասների փոխհատուցում ստանալու համար. այս հայցը կարող է հարուցվել նաև քրեական դատավարության ընթացքում: Այդուհանդերձ, հետազոտությունները ցույց են տալիս, որ թրաֆիկինգի ենթարկված անձանց փոխհատուցում տրամադրելու մեխանիզմներն արդյունավետ են միայն քիչ թվով պետություններում:

Հ. *Հնարավո՞ր է, արդյոք, ունենալ արդյունավետ ԳԱԾ առանց Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի մասին օրենքի: Կարելի՞ է, արդյոք, պատշաճ գործունեություն ծավալել առանց այդ օրենքի, երբ տարբեր պետական գերատեսչություններ հստակ չեն պատկերացնում իրենց դերը թրաֆիկինգի դեմ պայքարում: Սահմանու՞մ է, արդյոք, օրենքը յուրաքանչյուր գերատեսչության գործառույթները:*

Պ. Շատ պետություններ չունեն թրաֆիկինգի դեմ պայքարի մասին օրենքներ. դրանցից մի քանիսը չունեն նույնիսկ ԳԱԾ-եր: Այնուամենայնիվ, կան մի շարք արդյունավետ միջոցներ, որոնք կարող են ձեռնարկվել այս հանցագործության դեմ: Վավերացնելով Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան և դրան կից երկու արձանագրությունները, Հայաստանը դրանով իսկ միացել է հիմնական միջազգային փաստաթղթերին թրաֆիկինգի դեմ պայքարի բնագավառում: Բացի այդ, նոր քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածն ազգային օրենսդրությունը համապատասխանեցնում է միջազգային չափանիշներին: Այս ամենը հաշվի առնելով, կարծում ենք, առանձին օրենք ընդունելու անհրաժեշտություն չկա: Պետությունը թրաֆիկինգի դեմ պայքարի հետ կապված միջոցառումների համակարգման և ֆինանսավորման կարգավորումը կարող է իրականացնել ավելի ցածր մակարդակի իրավական ակտերի միջոցով (օրինակ, կառավարության որոշումներ):

Նման օրենսդրական նախաձեռնությունը պետք է քննարկվի գոյություն ունեցող կառուցակարգի համար դրա «հավելյալ արժեքի» տեսակետից: Ընդհանրապես, այդ օրենքի ընդունումը պետության միջազգային իրավական և քաղաքական պարտավորություններից բխող պարտադիր պահանջ չէ, սակայն այն կարող է օգտակար լինել մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի ամբողջական կառուցակարգ մշակելու համար, որը հիմնված կլինի մարդու իրավունքների վրա: Նման օրենքը կարող է նաև հիմք լինել ՈՒԱՄ ստեղծելու և բոլոր թրաֆիկինգի ենթարկված անձանց համար պետության կողմից ֆինանսական օժանդակություն ապահովելու, ինչպես նաև նրանց իրավունքները հստակ սահմանելու համար:

Ավելին, այն հանգամանքը, թե պետությունը մշակում է թրաֆիկինգի դեմ պայքարի մասին մեկ օրենք կամ տարբեր օրենսդրական ակտեր, կախված է նաև տվյալ պետության իրավական համակարգից: Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի մասին առանձին օրենք ընդունելու դեպքում կարիք կլինի անդրադառնալ տարբեր օրենսդրական ակտերի (օրինակ, քրեական օրենսգիրք, քրեական դատավարության օրենսգիրք և այլն) և կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ դրանց համապատասխանությունը և ներդաշնակությունն ապահովելու համար: Նման օրենքներ ընդունվել են ԵԱՀԿ մասնակից մի շարք պետություններում, այդ թվում՝ ԱՄՆ, Ռումինիա, Բուլղարիա, Մոլդովա և այլն: Թեև Մոլդովայի օրենքը բավականին հաջող է, սակայն լուրջ խնդիր է դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

ԳԱԾ-ը հայեցակարգային փաստաթուղթ է, և յուրաքանչյուր նախարարություն քաղաքական որոշում է ընդունում այն մասին, թե որքան է լինելու նրա ֆինանսական ներդրումը:

Հ. *Շատ հաճախ տուժածները չեն վստահում իշխանություններին և նախընտրում են դիմել հասարակական կազմակերպություններին: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ո՞վ է տնօրինում տուժածների ապաստանները՝ պետությո՞ւնը, թե՞ որևէ հասարակական կազմակերպություն:*

Պ. Չեխիայի Հանրապետությունում գործում է ունի երկու կացարան, որոնք երկու հասարակական կազմակերպությունների կողմից օգտագործվում են որպես ապաստան: Դրանցից մեկը տրամադրվում է պետության կողմից և դրա համար վճարում է պետությունը, մյուսի ծախսերը հոգում է հասարակական կազմակերպությունը: Երկու մոտեցումն էլ հնարավոր են:

Հ. *Ինչպես այսօր արդեն նշվել է, այժմ մենք պետք է աշխատենք «երկրորդ սերնդի ԳԱԾ-ի վրա»: Պե՞տք է, արդյոք, հիմք ընդունել նախորդ ԳԱԾ-ը: Պե՞տք է, արդյոք, այն ամենից հետո, ինչ արդեն արվել է, իրավական դաշտը այդ ծրագրում թողնել որպես գերակա հարց: Պե՞տք է, արդյոք, փոխել գերակայությունները: Ավելի է կարևորվում տուժածների պաշտպանությունը: Արդյո՞ք դա շատ ծախսատար կլինի: Ինչպիսի՞ն է միջազգային փորձն այս բնագավառներում:*

Պ. ԳԱԾ-ում պետք է պահպանվեն բոլոր հիմնական տարրերը, սակայն շեշտադրումը և գերակայությունները կարող են փոփոխվել: Իրավական բարեփոխումների տեսակետից, հետագայում ուշադրություն պետք է դարձվի տուժածների ու վկաների պաշտպանությանը: Չեխիայի Հանրապետությունում կառավարությունը որոշակի գումարներ է տրամադրում տուժածներին աջակցություն ցացաբերելու և հասարակական կազմակերպություններին օժանդակելու համար:

Հայաստանում իրավական դաշտը բարվոք է թվում: Պետությունը պետք է մշակի իր քաղաքականությունը և վերանայի իր օրենսդրությունը՝ ելնելով ներկա վիճակի ամբողջական ըմբռնումից: Քանի որ միջգերատեսչական հանձնախումբը որոշում ընդունող մարմին չէ, իրավական բարեփոխման խնդիրներից մեկը կարող է վերաբերել նաև հանձնախմբի իրավասության վերանայմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հանձնախմբի բոլոր անդամները տարբեր նախարարությունների հիմնական աշխատողներ են, նրանք ոչ միշտ են ի վիճակի բավականաչափ ժամանակ տրամադրել թրաֆիկինգի դեմ պայքարի հարցերին: Այնուամենայնիվ, այս ոլորտում նրանց աշխատանքը պետք է հստակ սահմանված ու ամրագրված լինի իրենց լիազորությունների շարքում:

Դրա հետ մեկտեղ, առաջնություններից մեկը կարող է լինել Ուղղորդման ազգային մեխանիզմի (ՈՒԱՄ) կարգավիճակի ավելի լավ ընկալումը: Այս հարցում իր աջակցությունը կարող է ցույց տալ ԵԱՀԿ Երևանի գրասենյակը, որն աշնանը ծրագրում է անցկացնել թրաֆիկինգի վերաբերյալ արձագանքների ամբողջական գնահատում:

Եզրափակիչ մաս

Կլոր սեղանի եզրափակիչ մասին ներկա գտնվող միջգերատեսչական հանձնախմբի անդամները նշեցին, որ վերանայվող ԳԱԾ-ի նախագծի առաջին տարբերակը պատրաստ կլինի 2006 թ. հունիսի վերջում, որպեսզի կատարվեն ԳԱԾ-ի իրականացման հետ կապված անհրաժեշտ ֆինանսական հաշվարկները և այն Ազգային ժողով ներկայացվի մինչև 2006 թ. սեպտեմբերին պետական բյուջեի հաստատումը: Հունիս - սեպտեմբեր ամիսները պետք է օգտագործվեն բոլոր պատասխանատու նախարարությունների հետ խորհրդակցություններ անցկացնելու և ԳԱԾ-ի նախագծի մշակմանը նրանց մասնակից դարձնելու համար:

Ամենահավանական տարբերակն այն է, որ միջգերատեսչական հանձնախմբի մեկ կամ երկու անդամ կմշակեն ԳԱԾ-ի նախագիծը և ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով կներկայացնեն շահագրգիռ պետական գերատեսչություններին և հասարակական կազմակերպություններին՝ մեկնաբանությունների համար: Այս կլոր սեղանի ընթացքում ներկայացված փորձագիտական կարծիքները հաշվի կառնվեն ԳԱԾ-ի նախագիծը մշակելիս: Նախագծի վերջնական տարբերակը կուղարկվի ԵԱՀԿ և այլ միջազգային կազմակերպություններ:

Միջգերատեսչական հանձնախումբն իր հաջորդ նիստի ժամանակ կքննարկի նաև որոշումներ ընդունող և գործընթացը համակարգող ազգային մեխանիզմ ստեղծելու հարցն ուսումնասիրելու նպատակով կառավարությանը դիմելու հնարավորությունը, այդ ընթացքում կշարունակելով իր աշխատանքն օպերատիվ խնդիրների լուծման մակարդակի վրա: